ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2016 թվականի N 168-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության 100 տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների *2015* թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ստացված զուտ շահույթից պետական բյուջե շահութաբաժինների վճարման չափերը.

1) «Ռուբիկ Հարությունյանի անվան Արովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *16.985.000* ՀՀ դրամ,

2) «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *500* ՀՀ դրամ,

3) «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *129.000* ՀՀ դրամ,

4) «Արգելի առողջության կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերություն - *800* ՀՀ դրամ,

5) «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերություն - *4.500* ՀՀ դրամ,

6) «Արզնիի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերություն - *500* ՀՀ դրամ,

7) «Բալահովիտի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերություն - *16.750* ՀՀ դրամ,

8) «Կիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերություն - *14.950* ՀՀ դրամ,

9) «Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *320.700* ՀՀ դրամ,

10) «Զառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *800* ՀՀ դրամ,

11) «Զովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *46.100* ՀՀ դրամ,

12) «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերություն - *7.800* ՀՀ դրամ,

13) «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *2.700* ՀՀ դրամ,

14) «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *2.150.200* ՀՀ դրամ,

15) «Հրազդանի մարզային արյան բանկ» պետական փակ բաժնետիրական ընկերություն - *103.000* ՀՀ դրամ,

16) «Մայակոսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *1.750* ՀՀ դրամ,

17) «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *12.500* ՀՀ դրամ,

18) «Նոր-Գեղիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *189.400* ՀՀ դրամ,

19) «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *526.000* ՀՀ դրամ,

20) «Պառոյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *303.850* ՀՀ դրամ,

21) «Զրվեժի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերություն - *534.500* ՀՀ դրամ,

22) «Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *9.900* ՀՀ դրամ,

23) «Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *20.000* ՀՀ դրամ,

24) «Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *44.500* ՀՀ դրամ,

25) «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - *245.300* ՀՀ դրամ:

Շահութաբաժնի գծով ընկերությունների վերը նշված պարտավորությունները սահմանված կարգով *(ոչ ուշ, քան մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը)* ենթակա են վճարման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի ***900005200416*** հաշվին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2016 թվականի հունիսի 15
ք. Հրազդան

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ